ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/264 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Boob Manufactues	Մոդուլ 1 Ընդունարանի սեղան /1 հատ/ Ընդունարանի սեղանը նախատեսված է ութից –ինը հոգու համար: Ընդունարանի սեղանի երկարությունը առնվազն 10մ է, բարձրությունը՝ առնվազն 750մմ `աշխատակիցների հատվածը, առնվազն 1000մմ՝ քաղաքացիների սպասարկման հատվածը: Ընդունարանի սեղանի աշխատակիցների հատվածի խորությունը ոչ պակաս քան 600մմ, հաճախորդ-քաղաքացիների հատվածի խորությունը՝ ոչ պակաս 450մմ: Հաճախորդ-քաղաքացիների սպասարկման հատվածը փակված կլինի առնվազն 500մմ բարձրությամբ, առնվազն 06մմ թրծված,թափանցիկ ապակիով,որը սեղանի մակերեսից բարձր պետք է լինի առնվազն 150մմ: Ապակին կլինի ութից-ինը կտորով, միմյանց միացված նիկելապատ ձողերի և հատուկ ապակե պահիչների միջոցով: Ընդունարանի սեղանի դիմացի հատվածի համար օգտագործվել է երկու գույն առնվազն 18մմ լամինատ: Մի գույնը օգտագործվել է, որպես ` հիմնական, մյուսը՝ դեկոր՝ 100մմ-120մմ լայնությամբ , ամբողջական երկարությամբ իրար զուգահեռ գծերի տեսքով: Ընդունարանի սեղանի ներսի կողմից յուրաքանչյուր աշխատակցի համար նախատեսված է մեկ տումբա՝ երեք դարակով, չափսերը՝ առնվազն 4500մմ*600մմ*730մմ,որը ծառայելու է սեղանին նաև որպես ոտք: Համակարգիչը մոնիտորի և ստեղնաշարի հետ կապող լարերի համար նախատեսել անցքեր ներկառուցվող

		կահույքի վրա: Համակարգիչների ներքին ցանցին միացման կետերը (անհրաժեշտության դեպքում) նախատեսել ներկառուցվող կահույքի վրա վարդակի օգտագործմամբ: Էլեկտրական սնուցման կետից դեպի սեղան տարվող էլեկտրական լարերը անցկացնել կորոբների միջով և հնարավորինս, աշխատակիցների գործունեությանը չխանգարող հատվածներով: Էլեկտրական լարանցումները կատարելիս պահպանել անվտանգության նորմերը; Նախատեսել հարմար տեղ ներքին հեռախոսի տեղադրման համար և դրա միացումը ներքին ցանցի հետ: Մոդուլ 2. Խոհանոցային սեղան/1 հատ/ Խոհանոցի սեղանը պետք է պատրաստված լինի առնվազն 18մմ հաստությամբ լամինատից: Չափսերը՝ առնվազն 1200մմ*800մմ*750մմ: Մոդուլ 3 Սեղան /1 հատ/ Սեղան առնվազն 3.6մմ լամինատից, եզրերը պրոֆիլապատ, սեղանի երկարությունը՝ առնվազն 180 սմ, լայնությունը՝ առնվազն 90 սմ, բարձրությունը՝առնվազն 75 սմ, դարակներ վակումային սահող դարակներով Սեղանի բոլոր եզրերը պրոֆիլապատ: Մոդուլ 4 Կլոր սեղան /1 հատ/ Կլոր սեղանը պետք ՝ լինի առնվազն D600 մմ,բարձրությունը առնվազն 750մմ,երեսը՝ երկշերտ լամինատ, ոտքը՝ մետաղական և մեջտեղից: Մոդուլ 5 Պահարան դարակաշարով/2 հատ/ Պահարանը պատրաստված է առնվազն 18մմ լամինատից: Չափսերը՝ առնվազն 900մմ*400մմ*2200մմ: Պահարանի վերևի հատվածը առնվազն 300մմ բաց դարակ է, մնացած հատվածը փակված է երկու դռներով: Փակ դռների ներսում կա երեք դարակաշար: Պահարանի բռնակները մետաղական են: Մոդուլ 6 Պահարան /1 հատ/ Պահարանը պատրաստված է առնվազն 18մմ լամինատից : Չափսերը ՝ 1400մմ*550մմ*2200մմ: Պահարանը՝ ձախ կողմում ունի առնվազն 500մմ լայնությամբ մեկ փակ դուռ,որի ներսում կա մետաղյա ձող կախիչների համար: Պահարանի աջ մասի վերևի հատվածը ունի երկու ապակյա դուռ, ներսում՝ երկու դարակաշար:Ապակյա դռներից ներքև՝ երկու լամինատե դուռ առնվազն 1200մմ բարձրությամբ, ներսում՝ երեք դարակաշար: Պահարանի բռնակները մետաղյա են: Մոդուլ 7 Պահարան կախիչով /1 հատ/ Պահարանը պատրաստված է առնվազն 18մմ լամինատից: Չափսերը՝ առնվազն 1400մմ*550մմ*2200մմ: Պահարանի ձախ հատվածում կա մեկ դուռ, ներսում՝ մետաղյա ձող կախիչների համար:Աջ հատվածում՝ երկու դուռ՝ ներսում հինգ դարակաշար: Պահարանի բռնակները մետաղական են: Մոդուլ 8 Ղեկավարի գրասեղան /1 հատ/ Ղեկավարի գրասեղան /կողադիր և դիմադիր սեղաններով/. - գրասեղան (1800երկ.*800լ.*750բ. մմ)՝ պատրաստված լամինատից՝ 18մմ հաստությամբ, երեսը և ոտքերը՝ չորս կողմից եզրակալված ՄԴՖ-ի պրոֆիլներով՝ 3,5-4սմ հաստությամբ, առանձին դարակաշար անիվների վրա՝ 3

		դարակով, վերևի դարակը՝ փականով, սողնակները՝ գնդիկավոր, մետաղական, դարակի լայնքը՝ 45սմ, խորությունը՝ 45սմ, բարձրությունը՝ 60սմ։Գրասեղանի դիմային մասը՝ մինչև գետին իջեցված, լամինատով փակված, կողքի պատերի լայնքը՝ առնվազն 60սմ։ Մալուխների համար նախատեսված անցք՝ կափարիչով։ Կողադիր սեղան (1200երկ.*600լ.*500բ. մմ)՝ բաժանված 2 հավասարաչափ մասերի, փակ դարակաշարով. - դիմադիր սեղան (90երկ.*60լ.*72բ. մմ)՝ պատրաստված լամինատից՝ 18մմ հաստությամբ, երեսը և ոտքերը՝ չորս կողմից եզրակալված ՄԴՖ-ի պրոֆիլներով՝ 3,5-4սմ հաստությամբ։ Մոդուլ 9 Գրասեղան /3հատ/ Առնվազն 1,8 մմ ոչ ավելի քան 2,2մմ լամինատից, եզրերը պրոֆիլապատ, սեղանի երկարությունը՝ առնվազն 120 սմ, լայնությունը՝ առնվազն 65 սմ, բարձրությունը՝առնվազն 75 սմ, մի կողմում համակարգչի համար նախատեսված դարակով, իսկ մյուս կողմում՝ 3 դարակներ վակումային սահող դարակներով, որոնց վրա մետաղական բռնակներ։ Գրասեղանի բոլոր եզրերը, այդ թվում՝ դարակները պրոֆիլապատ։ Համակարգիչը մոնիտորի և ստեղնաշարի հետ կապող լարերի համար նախատեսել անցքեր ներկառուցվող կահույքի վրա։ Մոդուլ 10 Գրապահարաններ/4 հատ/ Գրապահարանը պետք է պատրաստված լինի լամինատից։ Չափերը՝ խորություն՝ առնվազն 40 սմ, լայնությունը՝ առնվազն 90սմ, բարձրությունը՝առնվազն 200սմ։ Ընդ որում՝ առնվազն 10սմ հիմքով։ Պետք է բաղկացած լինի երկու բաժնից։ Վերևի բաժնի փեղկերը (ապակուց) բարձրությունը՝ առնվազն 120սմ, դարակների քանակը՝ առնվազն 3 հատ։ Ապակյա փեղկերի չափերը՝ առնվազն 120x45սմ։ Փեղկերին նախատեսել նրբագեղ փականներ՝ բանալիներով։ Ներքևի բաժնի դռների (լամինատից) բարձրությունը՝ առնվազն 70սմ, դարակների քանակը՝ առնվազն 2 հատ։ Լամինապատ դռների չափերը՝առնվազն 70x45սմ։ Պետք է լինի բարձր որակի։ Ամբողջ կահույքի վերջնական չափսերը, գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Առաջին հարկի ներկառուցված ողջ կահույքի (որոշ դեպքերում տարբերվող բնութագրերով) պատրաստման աշխատանքները ներկայացվում է մեկ չափաբաժնով, որպեսզի պահպանվի ընդհանուր դիզայներական ոճը և օգտագործվող նյութերի նմանությունը։ Կահույքի վերջնական չափագրումը կիրականացվի մրցույթում հաղթող ընկերության կողմից։ *Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված։ *Ապրանքների մատակարարումը և տեղադրումը պետք է իրականացնի հաղթող կազմակերպությունը

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Эдмонд Оганесян Вагеевич И/П в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/264 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		